ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/02/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 09 փետրվարի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Նարեկ Համբարձումյանի և Արամայիս Փաշինյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի փետրվարի 9-ին, քննելով ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կատյա Զավենի Գիշյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում, ինչպես նաև Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու փաստերի առթիվ 2022 թվականի հունվարի 18-ին հարուցված թիվ ՎԻՎ/02/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, Էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով պարզել է, որ ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կատյա Զավենի Գիշյանի 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հանձնաժողովի կողմից 2021 թվականի օգոստոսի 16-ին Կատյա Գիշյանին գրավոր ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել Հայտարարագիրը: Նշված ծանուցումը Կատյա Գիշյանի կողմից ստացվել է 2021 թվականի օգոստոսի 19-ին: Սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 Հանձնաժողովի՝ 2021 թվականի նոյեմբերի 29-ի թիվ Ե/1043/8-2021 գրությամբ Կատյա Գիշյանը 2021 թվականի դեկտեմբերի 15-ին՝ ժամը 10:30-ին հրավիրվել է մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը:

1.4 Հաշվի առնելով Կատյա Գիշյանի ներկայացուցիչ Նարինե Բեգլարյանի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 15-ին, ժամը 10:16-ին էլեկտրոնային փոստի միջոցով ստացված միջնորդությունը՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումը հետաձգվել է:

1.5 Հանձնաժողովի՝ 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ Ե/1235/5-2021 գրությամբ Կատյա Գիշյանը 2022 թվականի հունվարի 18-ին՝ ժամը 12:00-ին կրկին հրավիրվել է մասնակցելու վերը նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը:

1.6 2022 թվականի հունվարի 18-ին Կատյա Գիշյանի ներկայացուցիչ Անի Համբարձումյանի մասնակցությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/02/22 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.7 Հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 18-ի որոշմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/02/2022 գործի վարույթը: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին նշումով, համապատասխան ուղեկցող գրությամբ փոստային առաքման միջոցով ներկայացվել է Կատյա Գիշյանին:

1.8 Կատյա Գիշյանի ներկայացուցիչ Անի Համբարձումյանի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ ներկայացված փաստաթղթերում առկա որոշ փաստական հանգամանքներ լրացուցիչ պարզելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հանձնաժողովի 2022 թվականի թիվ Ե-01/195-2022 գրությամբ ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող Թ. Խաչատրյանից հայցվել է Կատյա Զավենի Գիշյանի աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝ Կատյան Զավենի Գիշյանը 2021 թվականի փետրվարի 17-ի դրությամբ

զբաղեցրե՞լ է Դեղձուտի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը և նույն հաստիքում ե՞րբ է դադարեցրել պաշտոնավարումը:

1.9 ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող Թ. Խաչատրյանից 2022 թվականի փետրվարի 4-ին ստացված թիվ 2 պատասխան գրության համաձայն՝ Կատյան Զավենի Գիշյանը 2005 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2021 թվականի հունիսի 11-ը զբաղեցրել է Դեղձուտի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը (համապատասխան իրավական ակտերի պատճենները կցվել են):

1.10 Կատյա Գիշյանի ներկայացուցիչ Անի Համբարձումյանի մասնակցությամբ 2022 թվականի փետրվարի 09-ին՝ ժամը 12:30-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

1.11 2022 թվականի փետրվարի 7-ին Կատյա Գիշյանի կողմից ներկայացվել է 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը.

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ Կատյա Գիշյանի ներկայացուցիչ Անի Համբարձումյանի կողմից ներկայացվել է գրավոր բացատրություն, որի համաձայն Կատյա Գիշյանն աշխատել է Դեղձուտ գյուղական համայնքի աշխատակազմի քարտուղարի պաշտոնում՝ սկսած 2007 թվականից և մինչև օրենսդրական փոփոխությունները չի կրել պարտականություն ներկայացնելու հայտարարագիր, իսկ փոփոխությունից հետո նա չի տեղեկացել իր մոտ նման պարտավորության ծագման մասին, որի պատճառով և չի ներկայացրել հայտարարագիրը:

Միաժամանակ, գրավոր բացատրության մեջ նշվել է, որ իր վստահորդի պնդմամբ վերջինս չի ստացել նաև որևէ ծանուցում Հանձնաժողովի կողմից, որի արդյունքում և 30-օրյա ժամկետում չի ներկայացրել հայտարարագիր:

Կից ներկայացվել են ՀՀ Արարատի մարզի Դեղձուտ համայնքի ղեկավարի 2021 թվականի հունիսի 11-ի թիվ 7 կարգադրության, 2020 թվականի հունիսի 15-ի թիվ 15 որոշման և 2007 թվականի հունվարի 25-ի թիվ 1 որոշման պատճենները:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/02/22 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կատյա Զավենի Գիշյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա

դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.2 Կատյա Գիշյանի կողմից մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը՝ 2022 թվականի փետրվարի 7-ին ներկայացվել է 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ Արարատի մարզի Դեղձուտի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կատյա Զավենի Գիշյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.2 2021 թվականի փետրվարի 17-ից ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-51-Ն օրենքի անցումային դրույթներ նախատեսող 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ***համայնքապետարանների աշխատակազմի քարտուղարները***, ավագանու անդամները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, Երևան համայնքի ավագանու անդամները ***մինչև 2021 թվականի մայիսի 31-ը*** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագիր:

4.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական

հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.6 Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.9 Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

4.11 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ նշանակությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Տվյալ դեպքում Կատյա Գիշյանի կողմից մինչև գործի քննության օրն ու ժամը Հայտարարագիրը ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Անդրադառնալով Կատյա Գիշյանի ներկայացուցիչ Անի Համբարձումյանի գրավոր բացատրության մեջ նշված այն հանգամանքին, որ իր վստահորդի պնդմամբ վերջինս չի ստացել նաև որևէ ծանուցում Հանձնաժողովի կողմից, Հանձնաժողովն արձանագրում է, որ գործի նյութերում առկա է 2021 թվականի օգոստոսի 16-ին Կատյա Գիշյանին ուղարկված գրավոր ծանուցումը, ինչպես նաև փոստային առաքման ստացման-հանձնման հետադարձ ծանուցագիրը, որի համաձայն Հանձնաժողովի գրավոր ծանուցումը ստացվել է 2021 թվականի օգոստոսի 19-ին:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

ՈՐՈՇԵՑ

1. Կատյա Գիշյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով ՎԻՎ/02/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կատյա Գիշյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**